Արարատ Ստեփանյան

ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (1072-1090 թթ.)

Բանալի բառեր - Սելջուկներ, Փիլարտոս, Մանազկերտ, Մարաշ, պետություն, Սեբաստոս, զորք, Կիլիկիա, Թոռնիկ, կաթողիկոսություն:

Փիլարտոս Վարաժնունու հանդես գալու ժամանակը

11-րդ դարի երկրորդ կեսին Բյուզանդական կայսրությունը ներքին ու արտաքին քաղաքականության մեջ լուրջ դժվարությունների հանդիպեց. դա մասնավորապես կապված էր սելջուկ-թուրքերի արշավանքների հետ, որոնք արևելքից արշավելով՝ երկիրը ծանր կացության մեջ էին դրել: Կայսրության դրությունն ավելի վատթարացավ 1071 թ. Մանազկերտի ճակատամարտից հետո: Բյուզանդական բանակի՝ Մանազկերտում կրած ծանր պարտությունից հետո կայսրությունում անիշխանություն հաստատվեց: Քաղաքական աննպաստ հանգամանքերից օգտվեցին կայսրության զինվորական ծառայության մեջ գտնվող մի շարք գործիչներ, այդ թվում՝ Փիլարտոս Վարաժնունին:

1. Փիլարտոս Վարաժնունու ծագումը

Փիլարտոս Վարաժնունու կենսագրությունը մինչև 1071 թ. քիչ է հայտնի[1]: Նրա մասին առաջին հավաստի տեղեկությունները վերաբերում են սելջուկների դեմ Ռոմանոս Դ Դիոգենես (1067-1071) կայսեր կողմից իրականացրած երկրորդ արշավանքին (1069 թ.): Ինչպես գրում է Հովհաննես Սկիլիցեսը, կայսրը զորքով հասնում է Ռոմանոպոլիս (Ռոմանոպոլիսը բերդաքաղաք էր և գտնվում էր Մեծ Հայքի Ծոփք (Չորրորդ Հայք) աշխարհի Բալահովիտ գավառում[2], իսկ ըստ Ե. Հոնիգմանի՝ Ռոմանոպոլիսը Ճապաղջուրն է)[3] և այնտեղից Խլաթ գնալու նպատակով զորքը բաժանում է երկու մասի՝ մեծ մասը թողնելով Ֆիլարետոսի զորավարի հրամանատարության ներքո, իսկ կայսրը զորքով շարժվում է առաջ, հասնում է Եկեղյաց գավառ[4]:

Ֆիլարետոսը նույն Փիլարտոսն է, որ պատմության մեջ հայտնի է Վարաժնունի տոհմանունով: Նա սկզբում սելջուկների դեմ հաջող մարտեր մղելով՝ ի վերջո պարտություն է կրում, իսկ նրա մոտ մնացած զինվորները փախչում են կայսեր մոտ[5]:

---

[1] Տե՛ս В. Степаненко, Античная древность и средние века, Государство Филарета Варажнуни (1071-1084/86 гг.), Свердловск,1975, с.86:

[2] Տե՛ս Հայաստանի և հարակից շրջաների տեղանունների բառարան, Երևան, 1998, էջ 448:

[3] Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 10. Բյուզանդական աղբուրներ, Գ. Հովհաննես Սկիլիցես, թարգմանությունը բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1979, էջ 375, ծնթ. 701:

[4] Նույն տեղում, էջ 230, 375, ծնթ., 705:

[5] Նույն տեղում, էջ 230:

Փիլարտոսը երիտասարդությունը անցկացրել էր հորեղբոր՝ Կոզեռնի մոտ՝ Հարսն–Մսուր գավառի Զորվրի-Կոզեռն վանքում: Քաղկեդոնական դառնալու պատճառով Մատթեոս Ուռհայեցին գրում է, թե «Սա ելեալ յանապատէ եւ եղեւ պիղծ անապատի»[1]:

Պատմագիտության մեջ Փիլարտոս Վարաժնունու անձի շուրջ կա բանավեճ: Սմբատ Սպարապետը իր «Տարեգրքում» Փիլարտոսին բնութագրում է որպես անհավատ ու բռնակալ մեկը, ով վանքից դուրս գալով, զինվորական դառնալով՝ տիրեց բազում գավառների ու բերդերի. «Բռնակալեալ երեւեցաւ անօրէն իշխանն Ֆիլառտոսն, եւ սկսաւ պատերազմել ընդ հաւատացեալսն Քրիստոսի. քանզի ոչ էր հաստատեալ ի հաւատս ճշմարիտս, զի ոչ հայ էր եւ ոչ Յոյն, բայց ազգաւ ի հայոց էր ի գաւառէն Հարսընմսրոյ, սնեալ ի վանս եւ լեալ կոպիտ աբեղայ, եւ ելեալ յանապատէ տիրեաց բազում բերդից եւ գաւառաց...»[2]: Մ. Չամչյանցը գրում է, որ Փիլարտոսը հունադավան էր և Վարաժնունիք գավառից. «Փիլարտոս ոմն անուն՝ հայ ազգաւ եւ կրօնիւք յոյն ' ի գաւառէն Վարաժնունեաց, կարգեալ զօրավար յունաց յաւուրս Դիոժենայ կայսեր»[3]: Հետևելով Մ. Չամչյանցին՝ Գ Միքայելյանը նույնպես գտնում է, որ Փիլարտոս Վարաժնունին Վասպուրականի Վարաժնունիք գավառում է ծնվել[4], թեև Կոմմագենացի հեղինակը կարծում է, որ Փիլարտոսի իրական անունն ու ծննդավայրն անհայտ են[5]: Ըստ Ն. Ադոնցի տեսակետի՝ Փիլարտոսը նույն Վարուժան Վարաժնունին է, որ պատկանել է հայկական ծագում ունեցող հայտնի բյուզանդական Վահամինների կամ Վահրամինների (Վահրամյաններ) տոհմին, որի նեկայացուցիչներից է Սախակիոս Վրախամիոսը (Սահակ Վահրամյան): Նա կայսերական բանակը լքած զորավար էր, որ անցել էր կայսերական բանակի դեմ ապստամբած Վարդաս Սկլերոսի կողմը՝ շրջափակումից ազատելով նրան ու նրա զորքը հասցնելով Լապարայի դաշտավայր, որտեղ և Վարդասին հաջողվում է տանել առաջին հաղթանակը[6]: Վարդաս Սկլերոսի ապստամբությունը տեղի է ունեցել 976 թ., հետևաբար Փիլարտոսի տոհմի բեմելը Բյուզանդիայում տեղի է ունեցել Հովհաննես Չմշկիկի օրոք (969-976)[7]: Ն.Ադոնցը նաև ստուգաբանում է Վախրամիոս անունը՝ գտնելով, որ դա հայկական Վահրամ, ժողովրդական Վախրամ անվան հին ձևն է, և Վախրամիոս ու Սախակիոս անունները բացահայտում են Մշո և Վանի բարբառներին հատուկ արտասանությունը, որտեղ «հ» հնչյունը արտասանվում է «խ» Վախրամ՝ Վահրամի փոխարեն և Սախակ՝ Սահակի փոխարեն[8]: Երվանդ Քասունին Անտիոքի իշխան Պեխտի անվան բացատրությանն անդրադառնալիս գրում է, որ մեր միջնադարյան հեղինակները Խաչատուրին Պեխտ են անվանել նրա հունադավան լինելու համար, այնպես, ինչպես Վարուժանին՝ Փիլարտոս[9]: Մենք համամիտ ենք Ն. Ադոնցի տեսակետին, որը

---

[1] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 206:
[2] Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 78-79:
[3] Միքայել Չամչյանց, Հայոց պատմություն, հ. Բ, Երևան, 1984, էջ 997:
[4] Տե՛ս Գ. Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, 2007, էջ 71:
[5] Տե՛ս «Փիլարտոս հայը. կիլիկեհայ ճոխութեան բուն հիմնադիրը», գրեց Կոմմագենացին, Հալեպ, 1930, էջ 10:
[6] Տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, հ. Ե, Երևան, 2012, էջ 496:
[7] Նույն տեղում, էջ 498:
[8] Նույն տեղում, էջ 499:
[9] Տե՛ս Երվանդ Քասունի, ԺԱ դարու Անտիոքի հայ կառավարիչներ Պեխտ-Խաչատուր և Վասակ Պահլաւունի, «Հայկազեան հայագիտական հանդէս» , Պեյրութ, 1971, էջ 127:

փաստերի հիման վրա ապացուցում է Փիլարտոսի՝ Բյուզանդիայում հայտնի Վահրամինների տոհմից լինելը:

Բացի պատմական աղբյուրներից, Փիլարտոսի մասին արժեքավոր նյութ են պարունակում նրա անունով պահված կնիքները: Սանկտ Պետերբուրգի պետական էրմիտաժում պահվող Փիլարտոսի արճճե կնիքներից մեկը փաստում է նրա՝ մագիստրոսի և դուքսի կոչման արժանանալու մասին[1]: Կնիքի առաջնամասում պատկերված են սրբապսակով երկու զիվոր. աջ կողմում Թեոդորոսն է, ձախում՝ Դմիտրին՝ զինվորական բաղադրիչները ձեռքին: Հակառակ կողմում վեցտողանի հունարեն գրություն է. «Աստվա'ծ, օգնիր Փիլարտոս Վարաժնունուն՝ մագիստրոսին և դուքսին»[2]:

Рис. 1. М-6696 лицевая сторона — М-6696 оборотная сторона

Բելգիայի Թագավորական գրադարանի մեդալների կաբինետում է գտնվում կնիքներից մյուսը, որի առաջնամասում պատկերված է Թեոդորոսը աջ ձեռքը հենած նիզակին, ձախ ձեռքով վահանը բռնած, հակառակ կողմում կա նույնպես հունարեն գրություն, որտեղ ասվում է «Աստվա՛ծ, օգնիր Փիլարտոս Վահրամիոսին, Անտիոքի կուրապաղատին և դուքսին»[3]: Փիլարտոսը կուրապաղատի կոչման և դուքսի պաշտոնին արժանացել է Նիկեփոր 3-րդ Վոտանիատեսի (1078-1081) կառավարման ժամանակ[4]:

Рис. 2. Лицевая сторона — Оборотная сторона.

[1] Տե՛ս В. Шандровская, Эрмитажные печати Филарета Врахамия (Варажнуни), «Լրաբեր», ՀԽՍՀ ԳԱ (հասարակ. գիտ.), 1975, №3 ,էջ 39:
[2] Նույն տեղում, էջ 40:
[3] Նույն տեղում, էջ 41:
[4] Նույն տեղում, էջ 41:

Կնիքներից մեկն էլ գտնվում է Վատիկանում, որի առաջնամասում նորից պատկերված է Թեոդորոսը, իսկ հակառակ կողմի վեցտողանի գրությունում Փիլարտոսը նշվում է որպես Բյուզանդիայի արևելյան զորքերի՝ սխոլերի[1] դոմեստիկոս (զորավար) և պրոտոկուրապաղատ: Նույն կնիքի մեկ այլ օրինակ պահվում է Էրմիտաժում[2]:

Рис. 3. М-9916 лицевая сторона — М-9916 оборотная сторона

Այս կնիքների գոյության փաստը ևս ապացուցում է Փիլարտոսի հզոր իշխանության ու բարձր դիրքի մասին:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ Փիլարտոսը եղել է Վարաժնունի տոհմից և աղբյուրներում հիշված է Վախրամիոս տոհմանունով:

2. Փիլարտոս Վարաժնունու իշխանապետության հիմնման նախադրյալները

Փիլարտոս Վարաժնունու ռազամաքաղաքական գործունեության նշանակալի ու հաջող ժամանակաշրջանը սկսվում է Մանազկերտի ճակատամարտից հետո: Դիոգենեսի մահվան պատճառով սկսված քաղաքացիական պատերազմները նպաստեցին Փիլարտոսի իշխանության հիմնման համար: Նա գրավում է Մարաշը (Գերմանիկ) և դարձնում իր իշխանապետության կենտրոն[3]: Նրան հաջողվում է նաև ժամանակավորապես հետ մղել սելջուկների առաջխաղացումը: Բյուզանդիան ստիպված ճանաչում է Փիլարտոսի նվաճումները[4]: Ինչպես վկայում է Մատթեոս Ուռհայեցին, Փիլարտոսին հաջողվեց դառնալ անկախ տիրակալ և կազմել 20 հազար զինվորից բաղկացած զորք: Դա պարզվում է Փիլրատոսի պատգամաբերների՝ Սասունի իշխան Թոռնիկին ուղղված պահանջից, որը մեջ է բերում Մատթեոս Ուռհայեցին. «Եւ ասեն ցԹոռնիկ կոչնականքն Փիլառտոսին թէ՝ «Ահա գայ բազում զորօք ի վերայ քո եւ տապալեալ աւերեսցէ զգաւառսն քո»: Ասէ Թոռնիկ. «Եւ քանի՞ են զօրքն Փիլառտոսին»: Ասեն արքն՝ «Իբրեւ քսան հազար»[5]: Մ. Չամչյանցը Փիլարտոսի զորքի թվաքանակի մասին գրում է. «…զայսու ժամանակաւ ինքնագլուխ ձեռներէցութամբ յապստամբու-

[1] Տե՛ս А. Мохов, Доместики схол запада второй половиных X начала XII в. По данным сфрагистики, Античная древность и средние века. Екатеринбург, 2008 вып. 38. էջ 165:
[2] Տե՛ս В. Шандровская, նշվ., աշխ, էջ 41- 42:
[3] Տե՛ս Ս. Բոռնազյան, Հայաստանը և Սելջուկները 11-12-րդ դդ, Երևան, 1980, էջ 187:
[4] Նույն տեղում, էջ 187:
[5] Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, նշվ աշխ., էջ 207:

թիւն զինեալ՝ ժողովեաց առ ինքն ’ի հայոց եւ յայլոց ազգաց արս իբրեւ քսան հազար. Եւ տիրեաց բազում քաղաքաց յերկրին յունաց եւ հայոց, եւս եւ այլ ազգեաց. Եւ եկեալ բնակեցաւ ’ի Մշար կամ ’ի Մարաշ»[1]: Իշխանության սահմանների ընդարձակման և իշխանության ամրապնդման համար Փիլարտոսը սկսում է նոր ծրագրեր մշակել:

11-րդ դարի կեսերին Տարոնը և Սասունը մտնում էին Գրիգոր Պահլավունի Մագիստրոսի իշխանությանը հանձնված Բյուզանդիայի արևելյան շրջանների մեջ՝ անմիջականորեն գտնվելով Գրիգոր Մագիստրոսի որդու՝ Գրիգոր Վկայասերի փեսա Թոռնիկ Մամիկոնյանի իշխանության ներքո[2]: Ըստ Է. Դանիելյանի՝ Սասունի Թոռնիկ իշխանը սերում է Մամիկոնյան կամ Մամիկոնյան–Թոռնիկյան տոհմից[3]:

Փաստորեն սեփական իշխանությունը հզորացնելու և ընդարձակելու համար Փիլարտոսը փորձում է իր գերիշխանությունը հաստատել ռազմական զգալի ուժի տիրապետող Սասունի իշխան Թոռնիկի վրա: 1073 թ. Փիլարտոսը պատվիրակություն է ուղարկում Թոռնիկ իշխանի մոտ և առաջարկում հպատակվել իրեն: Թոռնիկ իշխանը լսելով այդ՝ «ծիծաղեալ զանմիտ հրամանս նորա և ասացեալ թէ. «Ահա որ բնաւ ես ոչ տեսանեմ զերեսս նորա»[4]: Փիլարտոսը դիմում է կաթողիկոս Գրիգոր Մագիստրոսի միջնորդությանը՝ կարծելով, թե Թոռնիկը չի կարողանա մերժել հայոց հայրապետին: Սակայն վերջինիս այցը ապարդյուն անցավ, Թոռնիկը մերժում է նաև կաթողիկոսի՝ Փիլարտոսին հպատակվելու առաջարկը: Փիլարտոսը զորքով գրոհում է Սասունի վրա, ինչը թեև անակնկալի է բերում Թոռնիկին, սակայն նրան հաջողվում է 5000 հետևակ և 6000 հեծելազոր դուրս բերել հանկարծակի հայտնված Փիլարտոսի դեմ[5]: Թոռնիկ իշխանը զորքով գալիս է Ճապաղջուր՝ Փիլարտոսի դեմ[6]: Սակայն Փիլարտոսի զորքը այլևս անյտեղ չէր, ուստի Թոռնիկը հետևակ զորքը ետ է ուղարկում Սասուն, իսկ ինքը հեծելազորով մեկնում է Արշամաշատ (այն պատկանում էր Թոռնիկին և կառուցված էր Արածանի գետի վրա), իսկ այնտեղից՝ Անձիտ: Անձիտ գավառի Ալելուա դաշտում հանդիպում են երկու հակառակորդների զորքերը: Թոռնիկին հաջողվում է պարտության մատնել Փիլարտոսի զորքին և վերջինս միայն մի կերպ է կարողանում ազատվել հետապնդումից: Փիլարտոսին օգնության շտապող նրա դաշնակից Ամիր-Քափրը (Մայաֆարղինի Մրվանյան ամիրան), չհասնելով Փիլարտոսին, որոշում է դավադրությամբ սպանել Թոռնիկին: Նա խնջույքի է հրավիրում Թոռնիկին՝ սպանելու մտադրությամբ: Թոռնիկին հաջողվում է ազատվել ծուղակից. ծանր վիրավորելով ամիրային՝ նա փախչում է Արշամաշատ: Սակայն Ամր-Քափրի դարանակալած զինվորներից մեկը գլխատում է Թոռնիկին և նրա գլուխը ուղարկում Փիլարտոսին: Վերջինս էլ, ինչպես նշում է Մատթեոս Ուռհայեցին, նրա գանգից գավաթ է պատրաստել տալիս և դրանով գինի խմում, իսկ գանգի մնացած մասը ուղարկում է Մուֆարղինի ամիրային[7]: Սակայն Փիլարտոսի ջանքերը ի դերև ելան, քանի որ Թոռ-

---

[1] Միքայել Չամչյանց, նշվ աշխ., էջ 997:
[2] Մատթեոս Ուռհայեցի, նշվ., աշխ, էջ 207:
[3] Այս մասին մանրամասն տե՛ս Է. Դանիելյան, Տարոնի և Սասունի Մամիկոնյան-Թոռնիկյանները, «Պատմա-բանասրիական հանդես», Երևան, 1979 №2, էջ 137-153:
[4] Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 206:
[5] Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 207:
[6] Տե՛ս Ս. Բոռնազյան, նշվ. աշխ, էջ183:
[7] Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 206-209:

նիկ Մամիկոնյանի որդի Չորտվանելին հաջողվեց հաստատվել հոր աթոռին: Փաստորեն Սասունին տիրելու նրա ծրագիրը ձախողվեց[1]:

Շարունակելով իր տարածքների ընդլայնման փորձը՝ Փիլարտոս Վարաժնունին հաջողություններ ունեցավ Կիլիկիայում և հյուսիսասորիքյան տարածքներում: 1076 թ. Անտիոքի դուքս Գրիգոր Մագիստրոսի որդի Վասակ Պահլավունու դավադրական սպանությունից հետո հայ զինվորների հրավերը ընդունելով՝ Փիլարտոսը գնում է Անտիոք: Ըստ էության Անտիոքում գտնվող հայ զինվորները ճանաչում էին Փիլարտոսի գերիշխանությունն ու ձգտում էին հզոր պաշտպան ունենալ: Այստեղ Վասակ Պահլավունու վրեժը լուծելով՝ նա սպանում է 700 հույն զինվորների և հաստատում է իր իշխանությունը[2]:

Փիլարտոսը շարունակում էր հաղթական ռազմարշավը: Նրա հրամանով 1078 թ. Վասիլը գրավում է Եդեսիան, որը մինչ այդ կառավարում էր Լևոն դուքսը: Վասիլի մահից հետո Եդեսիան կառավարող Սմբատի դեմ ապստամբություն բարձրացնելով՝ մեծամեծներից Իշխան անունով մեկը հրավիրում է Փիլարտոսին և քաղաքը հանձնում նրան 1083 թ., սակայն վերջինս նոր ապստամբություններից խուսափելու համար ձերբակալում է Սմբատին, իսկ Իշխանին կուրացնելով՝ բանտարկում է Մարաշի բերդում: Իշխանին՝ իր դաշնակցին, կուրացնելու և բանտարկելու պատճառը, ըստ երևույթին, նրա կողմից հետագա դավադրություններից խուսափելն էր[3]:

Փիլարտոսի տիրապետությունը տարածվում էր նաև Կիլիկիայի մի զգալի մասի վրա: Կիլիկիայի մեծ մասին Փիլարտոսի տիրելու փաստը հաստատվում է Միխայել Ասորու տեղեկություններով: Նրա վկայությամբ հիսուն հայեր գալիս են Մարաշ և հպատակվում Փիլարտոսին, վերջինիս առաջնորդությամբ մտնում նաև Կլիլիկիա և սելջուկներից գրավում Քեսունը, Մարաշը, հետագայում՝ Մալաթիան, Ուռհան: Պատմիչը տեղեկացնում է. «…եւ տիրեալ էր թուրքն երկրին եւ առին ի նոցանէ բերդ մի եւ ամրացան ի նմա, եւ անտի առին շուրջանակի Կիլիկիոյ աշխարհս բազումս, զՄարաշ, զՔեսուն, զԱպլսթան եւ զՄլտենի եւ զՈւռհա՝ յանկոյս Եփրատայ, եւ զայլս բազումս»[4]: Կիլիկիայի հյուսիսային և հյուսիս-արևմտյան շրջանում ու դաշտային Կիլիկիայում իշխում էին Տարսոնի Ապլղարիպ Արծրունին և Լամբրոնի Օշին իշխանը[5], որոնք ենթարկվեցին Փիլարտոսին: Այն, որ Փիլարտոսը այս շրջանում ձևականորեն պահպանում էր հպատակությունը Բյուզանդիային, փաստում է «Սեբաստոս» բարձրագույն կոչմանն արժանանալը. «Իսկ լուեալ Յունաց թագաւորն առաքեաց նմա և անուանեաց զնա Սեվաստոս»[6]:

Այսպիսով, Փիլարտոսի հիմնած իշխանապետության սահմանները արևելքից արևմուտք ձգվում էին Եդեհսիայից մինչև Կիլիկիայի արևմտյան մասը, հյուսիսից-հարավ՝ Մալաթիայից մինչև Անտիոք [7]:

Փիլարտոսի իշխանապետության հիմնադրմանը և ամրապնդմանը նպաստեցին հետևյալ գործոնները.

---

[1] Տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում,Վենետիկ, 1901, էջ 300:
[2] Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 213-214; Սմբատ Սպարապետ, նշվ. աշխ.,էջ 83-84:
[3] Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ, էջ 223:
[4] Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոյ պատրիարքի, Յերուսաղէմ, 1871, էջ 399:
[5] Նույն տեղում, էջ 86:
[6] Նույն տեղում, էջ 399 :
[7] Տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հ.Ա, Երևան, 2005, էջ 419:

ա) Սելջուկյան արշավանքների պատճառով հայ բնակչության զանգվածային արտագաղթը դեպի Կիլիկիա և Հյուսիսային Միջագետք[1]:

բ) Սելջուկների՝ Փոքր Ասիա ներխուժելուց հետո Բյուզանդիան այլևս լուրջ քաղաքական ուժ չէր Արևելքում, և Փիլարտոսը կարող էր կայսրությունից անկախ իշխանություն հիմնել:

Բյուզանդիայի թուլացման պայմաններում հնարավոր դարձավ հիմնել մի ընդարձակ իշխանապետություն, որի ներուժը բավական էր սելջուկներին դիմակայելու համար:

3. Փիլարտոսը և հայկական կաթողիկոսությունը

Իր հզորությունը ի ցույց դնելու համար Փիլարտոսը որոշեց հայոց կաթողիկոսի նստավայրը տեղափոխել իր իշխանապետության տարածքը: Այդ ժամանակ նրա իշխանապետության տարածքում էր ասորիների պատրիարքարանը (Եդեսիա), և նա Գրիգոր Վկայասեր կաթողիկոսից պահանջեց, որ նա թողնի իր նստավայր Մուտառասուն ավանը Ծամդավի շրջանում և տեղափոխվի իր մոտ: Գրիգոր Վկայասերը մերժեց և անախորժություններից խուսափելու նպատակով իր փոխարեն այնտեղ կաթողիկոս նշանակեց Պետրոս Ա Գետադարձի եղբորորդի, Սեբաստիայի Սուրբ Նշան վանքի եպիսկոպոս Սարգիսին[2], որին կաթողիկոս ձեռնադրեցին Ջահան գավառի Հոնի ավանում[3]: 1076 թ. կաթողիկոսությունը հաստատվեց Փիլարտոսի իշխանապետության մեջ՝ նրա ցանկության ու ծրագրի համաձայն: Սակայն 1077 թ. վախճանվում է նորանշանակ կաթողիկոսը: Փիլարտոսի ջանքերով կաթողիկոս է օծվում Թեոդորոս Ալախոսիկը[4], որին ևս վիճակված չէր երկար կառավարել: 1084 թ., երբ սելջուկյան արշավանքի հետևանքով Պոլտաջի ամիրան գրավում է Ջահան գավառը, կաթողիկոսանիստը Փիլարտոսի սահմաններից դուրս է մնում, իսկ Թեոդորոս կաթողիկոսը մերժում է Փիլարտոսի մոտ գնալու հրավերը: Այս հանգամանքով պայմանավորված՝ Փիլարտոսը որոշում է կազմակերպել նոր կաթողիկոսի ընտրություն և այս անգամ առաջարկում է Հովհաննես արքեպիսկոպոսին՝ Մարաշի Սուրբ Աստվածածին թեմի առաջնորդին, որը մերժում է Փիլարտոսի առաջարկը[5]: Փիլարտոսը նույն այս առաջարկով դիմում է Վարագա Սուրբ Նշանի վանահայր Պողոսին, որն էլ ընդունում է առաջարկը (1085 թ.): Նա կաթողիկոս է դառնում. «Հրամանաւ և կամօք Փիլարտոսի, և ոչ Աստուծոյ»[6]: Պողոս կաթողիկոսը ևս երկար չկառավարեց և 1093 թ. մահացավ ու թաղվեց Եդեսիա քաղաքում[7]:

11-րդ դարի վերջին քառորդին հայրապետական աթոռը տարբեր տեղերում էր կենտրոնացված: Մատթեոս Ուռհայեցու բնորոշմամբ՝ Ս. Գրիգորի աթոռը մի քանի մասի էր բաժանվել[8]. մասնավորապես տեր Բարսեղը հովվապետ էր Անի քաղաքում, տեր Վահրամ Պահլավունին՝ Եգիպտոսում, տեր Թեոդորոսը՝ Հոնիում և տեր Պողոսը՝

---

[1] Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 217-218:
[2] Նույն տեղում, էջ 252:
[3] Նույն տեղում, էջ 252-253:
[4] Տե՛ս Ն.Ադոնց, Երևելի հայեր, Երևան, 2015, էջ 476: Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ240:
[5] Կոմմագենացի, նշվ. աշխ., էջ 37:
[6] Մատթեոս Ուռհայեցի, նշվ.աշխ., էջ 229:
[7] Նույն տեղում, էջ 244:
[8] Նույն տեղում, էջ 229:

Մարաշ քաղաքում[1]: Այսպիսով, Փիլարտոսին չհաջողվեց իր տարածքում երկար պահել կաթողիկոսական աթոռը:

4. Փիլարտոսի իշխանապետության կործանումը

Փիլարտոսի ստեղծած ընդարձակ իշխանապետությունը միանշանակ ընդունվել չէր կարող Բյուզանդիայի կողմից, քանի որ կայսրությունը շարունակում էր այն դիտարկել իբրև վասալական կախման մեջ գտնվող իշխանություն: Փիլարտոսի իշխանապետության թուլացման պատճառ հանդիսացան 1080-ականներին սելջուկյան նոր սուլթանություն հիմնելու հավակնորդ Սուլեյման իբն Քութուլմիշի արշավանքները: Սուլեյմանը գրավում է Նիկեան և Մարմարա ծովի կողմից շարժվում Կոստանդնուպոլսի ուղղությամբ: Սակայն նրան չի հաջողվում գրավել քաղաքը և նա ուղղվում դեպի Անտիոք: Քանի որ Փիլարտոսը գտնվում էր Եդեսիայում, 1084 թ. առանց լուրջ դիմադրության հանդիպելու սելջուկները գրավում են քաղաքը՝ այսպիսով ծանր հարված հասցնելով Փիլարտոսին: Այս մասին Մատթեոս Ուռհայեցին գրում է. «Գտեալ զքաղաքն (իմա՝ Անտիոք-Ա.Ս.) անպատրաստ և ի Հալպայ դիհէն ի գիշերի գողացան զքաղաքն Անտիոք եւ Փիլառտոսն էր ի քաղաքն Ուռհա…և օր քան զօր բազմանայր զօրք թուրքացն, և էառ զքաղաքն.եւ լուեալ զայս ամենայն Փիլառտոսն՝ ոչինչ կարաց առնել զուր ի հոգւոց հանեալ եւ դառնապէս ապաշաւէր»[2]: Սուլեյմանի մահից հետո՝ 1086 թ., Փիլարտոսը իր տարածքները պահելու համար նվերներով մեկնեում է Մելիքշահ սուլթանի մոտ (1072-1092). «Եւ առեալ Փիլառտոսն բազում գանձս ոսկւոյ և արծաթոյ, և այնիւ ձիս և ջորիս, և հանդերձս երևելիս և պայծառս, և գնացեալ առ սուլթանն ի յաշխարհն Պարսից (իմա՝սելջուկների-Ա Ս)[3]»: Փիլարտոսը իր իշխանությունը պահպանելու համար նույնիսկ մահմեդականություն ընդունեց: Բայց, այնուամենայնիվ, վերջինս անբարյացակամ վերաբերվեց Փիլարտոսին և մերժեց նրա՝ իր հովանու ներքո իշխանությունը պահպանելու առաջարկը: Փիլարտոսը Եդեսիայում (Ուռհա) իրեն փոխարինող էր նշանակել Պարակիմանոս սենեկապետին[4], որը դավադրաբար սպանվում է Փիլարտոսի որդու՝ Բարսամի (Վարսամ) ձեռքով[5]. ըստ երևույթին, Բարսամը չհանդուրժեց իր փոխարեն մեկ ուրիշին փոխարինող նշանակելը: Իսկ սելջուկ զորավար Պուզանը Մելիքշահի հրամանով գրավում է Ուռհան (1087 թ.) և քաղաքի կառավարիչ է նշանակում Խուլուխ անունով մեկին[6]:

Մելքիշահի գերիշխանության ներքո անցելու միջոցով իր իշխանապետությունը պահպանելու փորձի ձախողումից հետո Փիլարտոսը վերադառնում է իր երկիր և ականատես լինում սելջուկների կողմից երկրի մեծ մասի գրավմանը: Ինչպես գրում է

---

[1] Նույն տեղում, էջ 229:
[2] Նույն տեղում, էջ 224-225:
[3] Նույն տեղում, էջ 233:
[4] Պարակիմանոսը անուն չէ, այլ կայսրությունում բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը (Parakimomenos՝ սենեկապետ): Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, աշխր.թարգմ. Հ. Բարթիկյանի, Երևան 1973, էջ 333, ծնթ. 135:
[5] Տե՛ս Կոմմագենացի, նշվ. աշխ., էջ 79: Այսպիսի տեղեկության չենք հանդիպում Մատթեոս Ուռհայեցու մոտ:
[6] Տե՛ս Վարդանոյ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա,1862, էջ 107:

Միխայել Ասորին, Փիլարտոսը զղջալով՝ նորից դավանում է քրիստոնեություն, մտնում վանք[1] և այնտեղ էլ մեռնում 1090 թ.[2]:

Փաստորեն, Փիլարտոսի ստեղծած իշխանապետությունը 1072-1090 թթ. անհետ չվերացավ. 11-դարի վերջին և 12-րդ դարի սկզբին նրա տարածքում շարունակում էին գոյություն ունենալ հայկական մանր իշխանություններ, որոնք մինչ այդ Փիլարտոսի իշխանապետության մաս էին կազմում և հետագայում կործանվեցին խաչակիրների ձեռքով: Դրանցից մեկն էր Եդեսիայի իշխանությունը, որը ղեկավարվում էր Փիլարտոսի կողմից նշանակված Թորոսը, սակայն 1098 թ. մարտի 8-ին խաչակիր զորական Պաղտինը (իմա՝ Բալդուին, հետագայում Եդեսիայի կոմս- Ա.Ս.) սպանում է Թորոսին և գրավում քաղաքը[3]: 1101 թ. Թորոս իշխանի աներ Գաբրիելը, որ կառավարում էր Մալաթիա քաղաքը, հարկատու դարձավ սելջուկներին, և քաղաքը անցավ Դանիշման ամիրայի ձեռքը[4]:

11-րդ դարի վերջին Փիլարտոսի հպատակ Գող Վասիլը Հյուսիսարևմտյան միջագետքում և Կիլիկիայի մի մասում հիմնադրեց իշխանություն՝ Քեսուն կենտրոնով[5]: Այս իշխանությունը ևս կործանվեց խաչակիրների արշավանքների պատճառով 1117 թ.[6]:

Փիլարտտոսի իշխանապետության փլուզման հետևանքով ձևավորված իշխանություններից միայն Կիլիկյան հայկական իշխանությունը պահպանեց իր անկախությունը Բյուզանդիայի, սելջուկների և խաչակիրների դեմ պայքարում, վերածվեց թագավորության՝ ընդհանուր առմամբ գոյատևելով շուրջ երեք դար: Պատմագրության մեջ կա բանավեճ այն մասին, որ Ռուբենը իր իշխանությունը ստացել է Փիլարտոսից: Գ. Միքայելյանը գտնում է, որ Ռուբենը Փիլարտոսից չի ժառանգել Կիլիկիայի իր իշխանությունը[7], բայց միջնադարյան աղբյուրները մեզ հակառակն են ապացուցում: Այս մասին Կիրակոս Գանձակեցին գրում է, որ Փիլարտոսը գրավեց Կիլիկիան, որտեղ էին և Ռուբինյանները՝ թագավորական տոհմից սերողները. «Ի սկսանել թագաւորութեանն թուրքաց՝արք յիսուն, հայ ազգաւ, նեղեալք ի նոցունց, ելին յանապատ սպառազինեալք, և եկին ի Մարաշ, գտին այր մի քաջ, Փիլարտոս անուն, եդին զնա գլխաւոր և, մտեալ ի Կիլիկիա, առին զբովանդակ աշխարհն յորս էին և Ռուբինեանք՝ սերեալք թագաւորազունք[8]»: Որպես ասվածի հավաստում՝ հարկ է մեջբերել նաև Մխիթար Այրիվանեցու հիշատակած փաստը, ըստ որի «իշխանք Կիլիկեցւոյ» [9] ցանկի մեջ առաջինը գրված է Փիլարտոսի անունը, և ապա՝ Ռուբենի ու Կոստանդնի:

Փիլարտոսի իշխանության սահմաններում Կիլիկիայի մի զգալի մասի միավորումը հզոր ազդակ հանդիսացավ Կիլիկիայի իշխանության ստեղծման համար:

---

[1] Տե՛ս Միխայել Ասորի, նշվ. աշխ., էջ 399:
[2] Տե՛ս Ս.Բոռնազյան, նշվ. աշխ., էջ 197; Ե. Հ. Քասունի, նշվ.աշխ., էջ 31:
[3] Տե՛ս Գ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 76:
[4] Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, նշվ. աշխ., էջ 272-274:
[5] Տե՛ս Գ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 78:
[6] Տե՛ս L. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 421:
[7] Նույն տեղում, էջ 90:
[8] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 83-84: Նույնը կարդում ենք նաև Միխայել Ասորու մոտ, Տե՛ս Միխայել Ասորի, նշվ. աշխ.,էջ 406:
[9] Տե՛ս Մխիթար Այրիվանեցւոյ պատմութիւն ժամանակագրական, Ս. Պետերբուրգ, 1867, էջ 19:

Арарат Степанян, Княжество Филартоса Варажнуни (1072-1090), - Резюмируя: отметим, что Филартос Варажнуни сформировал свое княжество в условиях ослабления Византии и смог объединить большую часть Киликии, Эдессию, территории от Малатии до Антиоха. Здесь многочисленная и сплоченная армянская популяция дала ему возможность в течении двух десятилетий, создания огромной армии, и содержания границ монархии. Несмотря на то, что Королевство скоро перестало существовать, однако оно послужило мощной основой для возникновения других армянских более жизнеспособных княжеств.

Ararat Stepanyan, The Monarchy of Filartos Varazhnuni (1072-1090), - To summarize: we note that Filartos Varazhnuni formulated the monarchy in conditions of weakening of Byzantium and was able to unite most of Cilicia, Aedeses, the area from Malatya to Antioch. Here, a large and close-knit Armenian population within two decades gave him the opportunity of creating a huge army, and keeping the monarchy's borders. Despite the fact that the Kingdom soon ceased to exist, it has served as a strong foundation for the appearance of other more viable Armenian monarchies.

Արարատ Ստեփանյան- ԵՊՀ պատմության ֆակուլտետի սփյուռքագիտության ամբիոնի հայցորդ: